իրաւունքների իրագործումը Ժամ. Կառավարութեան կողմից վստահւում է իր նշանակած Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարին:

Յօդւ. 3. — Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարի մօտ գտնւում է քաղաքացիական մասի օգնականը:

Յօդւ. 4. — Ընդհանուր կոմիսարը, իր քաղաքացիական մասի օգնականի դեկուցման համաձայն, անմիջապէս ներկայացնում է Ժամ. Կառավարութեան իր նկատումները Թիւրքահայաստանի շրջանների կառավարութեան 5 յունիս 1916թ. ժամանակաւոր օրէնքի ցանկալի լրացումների և փոփոխութիւնների մասին:

Ստորագրեցին՝ Նախարարապետ Լվով
Արտաքին գործերի նախարար Պ. Միլիւկով
Ժամ. Կառավարութեան գործերի վարիչ Վլադ. Նաբոկով

26 ապր. 1917թ.

Այսպիսով, Թիւրքահայաստանի խնդիրը նորից դրւում էր միջազգային հողի վրա, հանւում էր կովկասեան միջցեղային կրքոտ փոխյարաբերութիւնների միջավայրից և կապւում ուղղակի կենտրոնական կառավարութեան հետ: Սա ինքնին մեծ յաջողութիւն էր հայերի համար:

Բացի այդ, նախատեսւում էր, որ ընդհանուր կոմիսարի օգնականը լինելու էր հայ և, ուրեմն, գրաւած վայրերի վարչական կազմակերպումը և, մանաւանդ, փաստական կառավարութիւնը ընթանալու էր ըստ ամենայնի հայկական ցանկութիւնների համաձայն: Այդպէս էլ եղաւ: Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսար նշանակւեց մի պարկեշտ զինուորական՝ զօր. Աւերիանովը, իսկ նրա քաղաքացիական մասի օգնական՝ բժ. Յ. Զաւրեանը— մէկը այն լուսամիտ ու գաղափարական գործիչներից, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրել էին հայկական գատին: Զաւրեանը աչքի ընկնող դեր էր կատարել և 1913թ. բարենորոգումների շրջանում, գործակցել էր Պօղոս Նուպարին պատերազմի ընթացքին, աշխատել ռուս դիւանագիտութիւնը շահագրգռել հայկական հարցով և լայն ծանօթութիւններ ու կապեր ունէր, ջերմ համակրանք էր վայելում ռուս քաղաքական շրջաններում: Նա մտերմական կապերով կապւած էր ռուսական յեղափոխութիւնը անձնաւորող Ա. Քերենսկիի հետ: Նրա նշանակումը գրաւած վայրերի վարչութեան ղեկավարութեան պաշտօնին գրաւական էր, որ այս անգամ խօսքը կարող է վերածւել գործի:

Եւ գործը չուշացաւ: Արագ կերպով մշակւեց Թիւրքահայաստանի գրաւած վայրերի վերաբնակեցման ծրագիրը, նշանակւեց վարչութեան նոր կազմ, խոշոր չափով հայերից, յատկացւեցին մեծագումար վարկեր և ձեռք առնւեցին միջոցներ, որ դաղթականութիւնը վերադառնայ իր տեղերը: Ասենք, առանձին միջոցների էլ պէտք չկար, քանի որ ժողովուրդը ինքը, երբ վերացան կապանքները, տարերային թափով մղւեց դէպի երկիր:

Կարճ ժամանակամիջոցում, Թիւրքահայաստանը, մանաւանդ, Վասպուրականի և Տարօն-Տուրուբերանի շրջանները վերակենդանացան: Ամէն